ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՉՈՐՔԵՐԻ 1796 Թ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Ս. Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Գեներալ Վ. Զուբովի 1796 թ. անդրկովկասյան արշավանքին անդրադարձել են մինչհեղափոխական պատմաբաններ Պ. Գ. Բուտկովը, Ն. Ֆ. Դուբրովինը, Կ. Ա. Եզյանը, Լեոն[1]։ Առանձնապես արժեքավոր է իրադարձությունների անմիջական մասնակից Պ. Գ. Բուտկովի աշխատությունը, որն, ըստ էության, սկզբնաղբյուրի նշանակություն ունի։ Արշավանքի մասին հետաքրքիր տեղեկություններ կան Հ. Արարատյանի, Գ. Խուբովի, Ի. Ռադոժիցկու հուշերում[2]։

Սովետական պատմագրության մեջ արշավանքին նվիրված հատուկ և ամբողջական ուսումնասիրություններ չկան, սակայն դրան առնչվող առանձին հարցեր լուսաբանվել են մի շարք հեղինակների կողմից։ Սովետական պատմաբանները տարբեր տեսակետներ են արտահայտել արշավանքի պատճառների և նպատակների վերաբերյալ։ Սակայն նրանք միասնական են այն հարցում, որ Ռուսաստանի առաջխաղացումն Անդրկովկաս առաջադիմական երևույթ էր տեղի ժողովուրդների համար, որոնք թուրք-իրանական նվաճողների դեմ պայքարում կողմնորոշվում էին դեպի Ռուսաստան։

1795 թ. սեպտեմբերին, ստանալով Աղա Մուհամադ խանի կողմից Թիֆլիսի վրա հարձակման լուրը, ռուսական կառավարությունը արշավանքն սկսելու վերաբերյալ որոշում ընդունեց։ Դա վերստին հույսեր արթնացրեց Հովսեփ Արղությանի մոտ, որը նոր եռանդով նվիրվեց հայրենիքի ազատագրման գործին։

Հարկ է նշել, որ ժամանակի ռուս գործիչները համակրանքով էին վերաբերվում Արղությանի ծավալած գործունեությանը։ Հետաքրքիր է, որ նախապատրաստվող արշավանքի մասին Արղությանը գրել է նաև գեներալ Գ. Ս. Վոլկոնսկուն՝ ամենայն հավանականությամբ արշավանքի վերաբերյալ առավել ստույգ տեղեկություններ ստանալու նպատակով։ Այդ մասին իմանում ենք Վոլկոնսկու 1795 թ. դեկտեմբերի 12-ի՝ Արղությանին ուղղված նամակից. «Պատիվ ունենալով ստանալու Նորին բարեգթության նամակը, ուր հայտնում է, որ Մեծն Եկատերինան Վրաստանն Աղա-մահմադ խանից ազատագրելու համար հրամայել է իր զորքին գնալ այնտեղ, ուրախ եմ, որ վերջինս Ձերդ Սրբազնությանը ևս գոհունակություն կպատճառի։ Իսկ արշավանքի մասին կարող եք հաստատապես իմանալ նաև իմ զեկուցագրից, որը երեկ կապիտան Գ. Զյաուրովի հետ ուղարկել եմ, և անկեղծորեն ցանկանում եմ, որ բարձրյալը

---

[1] П. Г. Бутков. Материалы для новой истории Кавказа. Ч. 2, СПб., 1869; Н. Ф. Дубровин. История войны и владычества русских на Кавказе. Т. III, СПб., 1886. Կարապետ Եզյանց. Ս. Էջմիածնի Մայր աթոռի և ռուսաց կառավարության հարաբերությունների ծագումը. Թիֆլիս, 1904։ Լեո. Հովսեփ Լազոտիոս Արղության. Թիֆլիս, 1902։ Նույնի՝ Երկերի ժողովածու. հ. 3, գիրք 2, Երևան, 1973։

[2] Жизнь Артемия Араратского. М., 1981; Е. Хубов. Описание достопамятных происшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Снмеонова (1779) до 1809 года. СПб., 1811; И. Радожицкий. Историческое известие о походе российских войск в 1796 г. в Дагестан и Персию под командою графа Зубова.—Отечественные записки. Ч. 31, СПб., 1827.

հաստատ պահի Ձեր ուժերը սկսած գործն ավարտին հասցնելու համար, և թող անհողդողդ մնա Ձեր ոգու կամքը»[3]։

Իմանալով արշավանքի նախապատրաստման մասին, Արղությանը դիմեց ռուսական կառավարությանը արշավանքի վերաբերյալ դատողություններով և առաջարկներով, որոնց հիմնական նպատակը ռուսական կառավարության ուշադրությունը հայ ժողովրդի հարցի վրա հրավիրելն էր։

1795 թ. դեկտեմբերի 15-ին, Պետերբուրգում «արարատյան հայության» ներկայացուցիչ Ստեփան Դավթյանին նա գրում էր. «Թէպէտ անցեալ ամին Պօպովի ձեռամբ մատուցի գրաֆին յատուկ գրով և դատողութեամբ իմով վասն Վրացն և մեր աշխարհին, սակայն գուցէ կորուսեալ իցէ, ահա նորապէս առաքեցի, որ բացի այդ պլանէ, աւելի ինչ ոչ կարեն առնել, լի է ամենայն ցուցակօք»[4]։

Ինչպես տեսնում ենք, 1794 թ. Արղությանը Պ. Ա. Զուբովին ներկայացրել է Հայաստանի ազատագրման վերաբերյալ ծրագիր, սակայն, անհանգստանալով, որ այն կարող էր անուշադրության մատնված լինել, արշավանքի նախօրյակին ուղարկել է նորը։ Արղությանի մտահոգությունը պատահական չէր, քանի որ նա տեսնում էր, որ ռուսական կառավարությունը հետաքրքրություն հանդես չէր բերում հայ ժողովրդի խնդրի կապակցությամբ։ Դեռևս 1784 թ. հոկտեմբերին, Մինաս Լազարյանին ուղղված նամակում ակնարկելով Գ. Պոտյոմկինի՝ Հայաստանի վերականգնման ուղղությամբ եղած պլանները, Արղությանը գրում էր. «Վասն ազատութեան երկրին մերոյ որպես յառաջ սիրահարք էին այժմ այնպէս չէ, թէպէտ զօրապէտն կամի յոյժ, սակայն բանն ի վերն թոյլ երևի, մերքն սիրահարքեն և միշտ մարդ և գիր առաքեն, բայց անօգուտ»[5]։

1796 թ. փետրվարի 19-ին Պ. Ա. Զուբովը տեղեկացնում էր Արղությանին, որ զեկուցագիրը ստացել է. «Ձերդ Սրբազնության՝ Իոսիֆ Իվանովիչ Խորվատի միջոցով Հայաստանի և նրան հարող պարսից շրջանների վերաբերյալ ուղարկած տեղեկությունները, քարտեզի հետ միասին, ստացել եմ նույնությամբ, մեկ անգամ ևս համոզվելով հայրենակիցների ճակատագրի հանդեպ Ձեր ունեցած հոգատարության մեջ»[6],—գրում էր նա։

Իր զեկուցագրերում Արղությանը չէր սահմանափակվում լոկ տեղեկություններ հաղորդելով, այլ առաջարկում էր արշավանքի որոշակի պլան, վստահ լինելով, որ այն հաջողություն կապահովի[7]։ Նա նախ և առաջ անհրաժեշտ էր համարում գրավել Դերբենդը, որը վճռական նշանակություն ուներ հետագա առաջխաղացման համար։

Այսպես, չսահմանափակվելով արքունիքի ուղարկած զեկուցագրով, 1796 թ. փետրվարին, Կովկասյան գծի հրամանատար, գեներալ Ի. Վ. Գուդովիչին[8] և գեներալ Ի. Դ. Սավելևին ուղղված նամակներում Արղությանը խոր-

---

3 Собрание актов, относящихся к обозрению истории Армянского народа. Ч III, М., 1838, с. 335.

4 «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 2, էջ 65։

5 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ). Ձեռ. № 4496, թ. 234։ Այդ մասին տե՛ս նաև ձեռ. № 2699, թ. 42, 130, ձեռ. № 2949, թ. 47—48. «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 2, էջ 54։

6 АВПР. ф. Сношения России с Арменией (այսուհետև՝ ф. СРА), оп. 100/III, д. 462, л. 33об.

7 Ի դեպ, արշավանքի ընթացքը ցույց տվեց, որ Արղությանի պլանում բավականին ճիշտ էր արտացոլված ռուսական բանակի ուղերթը։

8 Պատահական չէ, որ Արղությանն աշխատում էր Գուդովիչին ակտիվ գործողությունների մղել. Վերջինիս նա մեղադրում էր Թիֆլիսն ավերածությունից փրկելու համար անհրաժեշտ նախաձեռնություն չցուցաբերելու մեջ. «Մեղաւորն Կոտովիչն է ողորմելի անբախտ արքային,—գրում էր նա Դավթյանին,—ի մարտի (մարդ) առաքեալ էր առ նա և դրեալ՝ օգնել կամ հրաժարիլ։ Թէպէտ ես շատ խօսեցայ ընդ նմայ վասն այսմ, որ երկիրն առանց ձեր օգնութեան փչանալոց է, այլ հաստագլուխ նորա ոչ ընկալաւ» («Բանբեր Երևանի համալսարանի», 1978,

հուրջ էր տալիս ուժեղացնել Դերբենդի տակ եղած զորքը և անհապաղ գրոհով վերցնել քաղաքը[9]։ Դա պատճառաբանվում էր նախ նրանով, որ օգտվելով հապաղումից Դերբենդի խանը հնարավորություն կստանար լեռնականներին հանելու ռուսների դեմ և երկրորդ՝ Դերբենդի գրավումից հետո մյուս խաները չէին համարձակվի դիմադրություն ցույց տալ։ «Անհրաժեշտ է շտապ գրավել Դերբենդը, քանի որ եթե դա չարվի, ապա վտանգավոր կլինի առաջանալ դեպի Պարսկաստանի խորքերը։ Բացի այդ, հապաղելու դեպքում, խանը հնարավորություն կստանա լեռնականներին հանելու Ռուսաստանի դեմ։ Դերբենդը վերցնելիս պետք է նկատի ունենալ, որ չնայած վերոհիշյալ խանը հավատարմության երդում է տվել, չի կարելի վստահել նրան, քանի որ ուխտադրուժ է և խարեբա»[10],—գրում է Արղությանը։

Արղությանը մեծ տեղ էր տալիս Դերբենդի գրավմանը նաև այն պատճառով, որ քաղաքում բավական թվով հայեր էին բնակվում[11], որոնք պատրաստ էին աջակցել ռուսական բանակին. «Դերբենդի հայերը, Ռուսաստանի հանդեպ ունեցած իրենց հավատարմությամբ, որը հայտնի է դեռևս Պետրոս Մեծի օրերից, ամեն միջոց կգործադրեն ռուս զինվորներին օգնելու համար։ Այն ժամանակ կոգևորվեն նաև Ռուսաստանին հավատարիմ խաները, ինչպես օրինակ Մելիք Աբովը և Շուշու Իբրահիմ խանը, որոնք բազմիցս իրենց դեմ Նլաչ Աղա-Մահմադ խանի զորքերին պարտության են մատնել»[12]։

Նշելով դեռևս Պետրոս Մեծի օրոք ռուսների հետ համագործակցելու պատրաստակամության մասին, Արղությանը շեշտում է, որ հայերի մեջ վառ է մնացել ռազմական ոգին և որ ռուսական զորքերի մոտ լինելն այժմ էլ կոգևորի ու պայքարի կհանի նրանց։ Սա խոսում է այն մասին, որ Արղությանն ակտիվ դեր էր վերապահում հայ ժողովրդին իր ազատագրման գործում[13]։

Ինչ վերաբերում է նամակի վերջին հատվածին, ապա առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ, որ Ռուսաստանին հավատարիմ խաների թվում Մելիք Աբովի անվան կողքին Արղությանը հիշատակում է նաև Իբրահիմ խանին, եթե նկատի ունենանք, որ նա աշխատում էր, որպեսզի Ռուսաստանն իշխանազուրկ անի խանին։ Սակայն դա վկայում է, որ Արղությանը ճկուն զոր-

---

N: 2. էջ 65)։ Գուդովիչն այդ հարցում իրոք որ անհրաժեշտ օպերատիվություն չցուցաբերեց (տե՛ս Очерки истории СССР (XVIII в., II половина), с. 734—735)։

9 Ուշագրավ է, որ հետագայում, երբ Շեյխ-Ալի խանը Դերբենդը հանձնելու համար իր ներկայացուցչին ուղարկեց Զուբովի մոտ, վերջինս անպատասխան թողեց նրան, միաժամանակ հրամայելով կրակ բացել քաղաքի վրա (տե՛ս Н. С. Киняпина, М. М. Блиев, В. В. Дегоев. Кавказ и Средняя Азия во внешней политике России. М., 1984, с. 89—90)։

10 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 463. л. 102. Եվ իրոք, Դերբենդի խանը հետագայում անախորժություններ պատճառեց Զուբովին։ Այդ մասին մանրամասն տե՛ս П. Г. Бутков. Указ. соч., с. 390—395; Жизнь Артемия Араратского, с. 129.

11 Ի. Ռադոժիցկու վկայությամբ Դերբենդի և շրջակայքի հայ բնակչության թիվը հասնում էր 3000-ի, որոնց մասին նա գրում էր. «Նրանք, ովքեր կարող էին զենք կրել, ստիպողաբար քաղաքն էին պաշտպանում և հսկում աշտարակները, բարեբախտաբար ոչ նրանք, որոնք վերցվեցին գրոհով» (Отечественные записки, ч. 31, с. 153)։

12 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 463, л. 100. Այս նամակից իմանում ենք նաև, որ Արղությանը Գուդովիչին ներկայացրել է արշավանքի վերաբերյալ մանրամասն զեկուցագիր, որը, հավանաբար, պետք է բացատրել նրանով, որ մինչև Զուբովին գլխավոր հրամանատար նշանակելը ենթադրվում էր, որ արշավանքը գլխավորելու էր Գուդովիչը։

13 Պատահական չէ, որ 1793 թ. մայիսին Պ. Ա. Զուբովին ուղղված նամակում Արղությանը պատմում էր Հովսեփ էմինի մասին, նշելով, որ 1780 թ. Գ. Ա. Պոտյոմկինը հանձնարարել էր դրել նրան և Ռուսաստան հրավիրել (տե՛ս АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 464, л. 176)։ Հիշեցնելով Պոտյոմկինի դիտավորության մասին, Արղությանն ակնարկում էր, որ եթե ռուսական կառավարությունը ցանկանա, որպեսզի հայերը դենքի դիմեն, ապա հանձինս Հովսեփ էմինի կան մարդիկ, որոնք կարող են միավորել և պայքարի առաջնորդել հայ ժողովրդին։ Նշենք, սակայն, որ այդ ուղղությամբ Արղությանի արված բոլոր առաջարկները մնացին անպատասխան։

ծիլ էր։ Նկատի ունենալով, որ Իբրահիմը դիմադրություն էր ցույց տվել Աղա-Մուհամադին[14] և արժանացել ռուսական կառավարության ուշադրությանը, նա այնպիսի տպավորություն էր ստեղծում, թե իր առաջարկներն անելիս նախ և առաջ ելնում էր Ռուսաստանի շահերից։ Արղությանը հույս ուներ, որ Ղարաբաղը գրավելուց հետո վերջ կդրվեր Իբրահիմի իշխանությանը, քանի որ ռուսական կառավարությանը հայտնի էր, որ խանը երկդիմի քաղաքականություն էր վարում[15]։

Հաշվի առնելով Արղությանի առաջարկները, Գուդովիչն անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկում դրանց իրականացման ուղղությամբ, որի մասին 1796 թ. փետրվարին, Գեորգիևսկից Արղությանին հայտնում էր հետևյալը. «Երախտագիտությամբ ընդունում եմ Ձեր խորհուրդները և նախապես բոլոր անհրաժեշտ կարգադրություններն արել եմ Դաղստան՝ մինչև Դերբենդ ջոկատ ուղարկելու մասին»[16]։ Գուդովիչը հույս ուներ, որ իրեն արշավանքի հրամանատար կնշանակեն, սակայն հուսախաբ եղավ։ Մնալով գծի վրա, նա պետք է միայն հոգ տաներ գործող բանակին պարենով և փոխադրամիջոցներով ապահովելու մասին։ Իսկ զորքերի գլխավոր հրամանատար նշանակվեց կայսրուհու ֆավորիտի եղբայրը՝ դեներալ-պորուչիկ Վ. Ա. Զուբովը[17]։ Նկատի ունենալով, որ Արղությանը լավատեղյակ էր Անդրկովկասի գործերին, Պ. Ա. Զուբովը հատուկ գրով առաջարկեց նրան մեկնել Մոզդոկ՝ հրամանատարի հետ հանդիպելու համար։ «Խոնարհաբար խնդրում եմ, որպես գործին նվիրվածության մի նոր ապացույց, մեկնեք Մոզդոկ եղբորս հանդիպելու և պարսկական գործերի ու այդ երկրին հարևան ժողովուրդների մասին ունեցած Ձեր ընդարձակ և մանրամասն գիտելիքներով նրան օգտակար լինելու համար»[18]։

1796 թ. մարտին Արղությանը ժամանում է Ղզլար և լավ ընդունելության արժանանում Վ. Ա. Զուբովի կողմից։ Վերջինիս հետ զրույցների ժամանակ, բնականաբար, շոշափվում է նաև Հայաստանի հարցը։ Զուբովն առաջարկում է Արղությանին անձամբ մասնակցել արշավանքին. «Այնուհետև Ղզլար եկավ Վալերիան Ալեքսանդրովիչը և ինձ մեծ պատվով ընդունեց և խոսեց հետս մեր երկրի և մելիքների բոլոր կարիքների մասին։ Ինչպես նրա եղբայրը, այնպես էլ ինքը շատ են ցանկանում, որպեսզի ուղեկցեմ իրեն արշավանքի ժամանակ մեր ազգին օգուտ տալու և հուսադրելու համար։ Ես չկարողացա մերժել, խնայելով հոգնատանջ մարմինս, և կարծում եմ, վերջում, աստծու օգնությամբ, օգնություն և ապահովություն կլինի իմ ազգին»[19]—գրում է Արղությանը Հովհաննես Լազարյանին։

---

14 Աղա-Մուհամադի դեմ հայ-ադրբեջանական հերոսական դիմադրության մասին մանրամասն տե՛ս Ռ. Տ. Տիտանյան. Նորահայտ նյութեր 1793—1795 թթ. Շուշիբերդի հերոսական պաշտպանության մասին.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1966, № 9, էջ 28—41։ Նույնի՝ Հայկական աղբյուրները Աղա-Մուհամադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին. Երևան, 1981։

15 Տե՛ս П. Г. Бутков. Указ. соч., с. 406. Ի դեպ, 1796 թ. հոկտեմբերին Արղությանը Շամախուց հայտնում էր, որ Մուստաֆա և Իբրահիմ խաները, ի նշան հավատարմության իրենց ներկայացուցիչներն ուղարկելով կայսրուհու մոտ, միևնույն ժամանակ դիմել էին Աղա-Մուհամադին (տե՛ս АВПР, ф. СРА, оп. 100/I, д. 462, л. 22):

16 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 463, л. 100.

17 Արղությանը շատ էր ցանկանում, որպեսզի արշավանքը գլխավորեր Ա. Վ. Սուվորովը։ Հայտնի է, որ Եկատերինա II-ը առաջարկեց Սուվորովին իր վրա վերցնել զորքերի հրամանատարությունը, սակայն վերջինս հրաժարվեց (տե՛ս М. Г. Нерсисян. А. В. Суворов и русско-армянские отношения. Ереван, 1981, с. 76—77).

18 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 33 об., տե՛ս նաև Н. С. Киняпина, М. М. Блиев, В. В. Дегоев. Указ. соч., с. 89. Այս կապակցությամբ Մ. Մ. Բլիևը նշում է, որ Զուբովն Արղությանին դիմեց Իրանի դեմ ռազմական գործողություններին հայերի մասնակցությունն ապահովելու խնդրանքով (տե՛ս նույն տեղում), Նշենք, սակայն, որ նման մեկնաբանումը ոչ մի փաստով չի հիմնավորվում։

19 Кавказская старина. Тифлис, 1872, № 2, с. 31.

Հաշվի առնելով, որ Արղությանը մեծ հեղինակություն էր վայելում իր հայրենակիցների շրջանում, ինչպես նաև Անդրկովկասում, ռուսական կառավարությունը նպատակահարմար էր գտել, որպեսզի նա արշավանքի ժամանակ անձամբ ուղեկցի Զուբովին։

Ամենայն հավանականությամբ, Արղությանն ինքն էլ իրադարձություններին անմիջականորեն մասնակցելու հույսեր էր փայփայում, քանի որ անձամբ գործող բանակում գտնվելով շատ ավելին կարող էր անել իր հայրենակիցների համար[20]։ Բացի այդ, նա գտնում էր, որ ռուսների անբավարար ծանոթությունը տեղական պայմաններին կարող էր անցանկալի հետևանքների հանգեցնել։ Այդ տեսակետից բնորոշ են Դավթյանին գրած հետևյալ տողերը. «Երբ ես կոմսի (Վ. Ա. Զուբովի—Ս. Ղ.) հետ խոսեցի Երևանի մասին, նա, անտեղյակ լինելով հանգամանքներին, անուշադրության մատնեց։ Բայց դա շատ կարևոր գործ է։ Ահա այդ և այլ պատճառների հետևանքով անհրաժեշտ է, որ ես շտապեմ բանակ»[21]։

Հայրենիքն ազատագրված տեսնելու նվիրական ձգտումը նորից ուժ ու եռանդ հաղորդեց այդ անխոնջ մարդուն, և, արհամարհելով առողջական վատ վիճակը, հուլիսին նա մեկնեց ռուսական բանակ։

Այժմ տեսնենք, թե ինչ առաջարկներ էր անում Արղությանն արշավանքի վերաբերյալ և ինչ սպասելիքներ ուներ, երբ հանձն էր առնում նման առաքելություն։ Այդ մասին որոշակի պատկերացում է տալիս 1796 թ. սեպտեմբերին Վ. Ա. Զուբովին ուղղված զեկուցագիրը, որը վկայում է ստեղծված իրադրության մեջ Արղությանի ճիշտ կողմնորոշվելու, ինչպես նաև նրա քաղաքական ու ռազմական գիտակության մասին[22]։ Կանգ առնենք այդ ուշագրավ փաստաթղթի այն կետերի վրա միայն, որոնք առնչվում են հայերի ազատագրման հարցի հետ։

Զեկուցագրի 7-րդ կետով Արղությանն առաջարկում է գրավել Գանձակը, որի խանը հակված էր ընդունելու Ռուսաստանի հովանավորությունը[23]։ Շահագրգռված լինելով, որպեսզի ռուսական բանակը որքան հնարավոր է շուտ Գանձակով մտներ Ղարաբաղ, Արղությանն արդյունավետ չէր համարում մեծ ուժերի տեղափոխումը Վրաստան և խորհուրդ էր տալիս հիմնական ուժերը կենտրոնացնել Գանձակում, որն ավելի նպաստավոր դիրք ուներ հետագա առաջխաղացման համար և որտեղից կարելի էր օգնել Երևանի հայությանը[24]։

Այնուհետև նա անցնում է Ղարաբաղին։ Հարկավոր էր հասնել նրան, որպեսզի ռուսական կառավարությունը իշխանազուրկ աներ Իբրահիմ խանին։

---

20 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին Արղությանը գտնվում էր Պոտյոմկինի բանակում և մեծ գործ կատարեց պատերազմի հետևանքով տուժած հայրենակիցներին օգնելու և Ռուսաստան տեղափոխելու համար։ Նրա անմիջական մասնակցությամբ հիմնվեց Գրիգորիոպոլ քաղաք-գաղութը (տե՛ս Ж. А. Ананян. Армянская колония Григориополь. Ереван, 1969; Ս. Գ. Ղուկասյան. Հովսեփ Արղությանի օրագրությունն ու նամականին որպես 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին Բեսարաբիայի հայ բնակչության Ռուսաստան տեղափոխման պատմության աղբյուր.—«Բանբեր Հայաստանի արխիվների», 1984, № 3, էջ 136—143)։

21 Кавказская старина, 1872, № 2, с. 34.

22 Մանրամասն տե՛ս АВПР. ф. СРА. оп. 100/III. д. 462, л. 34—39 об.

23 Ենթարկվելով Հերակլ II-ի և Իբրահիմ խանի հարձակումներին, Գանձակի խանը իրոք որ ներդաստում էր ավելի շուտ լինել Ռուսաստանի գերիշխանության տակ, քան թե դառնալ վերը նշվածների վասալը (տե՛ս Г. І. Бутков. Указ. соч., с. 406)։

24 Այդ կապակցությամբ Արղությանը Դավթյանին գրում էր. «Գրելոց եմ գրաֆին, եթէ միայն ի վերայ Թիֆլիզու գնան, ոչ ինչ օգնեն, այլ աւերակաց դիւրութեամբ տիրեն, զի թշնամին կործանեաց վասն դոցա։ Իսկ եթէ ի վերայ Դերբենդու և Գանջայու գնան ի վերայ Բաքուայ՝ նախ զՇաքի, Շրուան ի ձեռն առնուն դիւրեաւ և ապա զԳենջայ առնուն, անտի կարեն օգնել Հայոց Երևանու և այլոց, ես գերելոցն՝ որք ի Պարսս են»։ (Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը XVIII դարի վերջում. Երևան, 1958, էջ 166)։

Այդ նպատակով Արղությանը խորհուրդ էր տալիս Իբրահիմից պահանջել հրամանատարի տրամադրության տակ դնել իր և մելիքների զորքը։ Խանի մերժումը նրա կեղծ հավատարմության ապացույցը կդառնար, որի դեպքում Արղությանն առաջարկում էր մելիքների միջոցով իշխանազուրկ անել նրան, «քանի որ նրա ուժը ավելի շատ հայերն են, որոնք թեև քաջ են և արի, սակայն ռուսական դահին իրենց անկեղծ նվիրվածության պատճառով ոչ միայն ռուսների դեմ զենք չեն բարձրացնի, այլև Իբրահիմի արժանի վախճանին (եթե վերջինս ուխտադրուժ դուրս դա) կաջակցեն»[25],— գրում է Արղությանը։

Այսպիսով, Ղարաբաղի ազատագրումը մնում էր Արղությանի հիմնական նպատակներից մեկը։ Բացի այդ նա ընդգծում էր, որ մելիքները դեռևս որոշակի ռազմական ուժ էին ներկայացնում և պատրաստ էին աջակցություն ցույց տալ ռուսներին։ Ուշագրավ է, որ հայ զինվորների քաջության մասին խոսելիս Արղությանը նշում է, որ նրանց միանգամայն կարելի է առաջնային դիրքերը վստահել և առաջարկում է հետագայում մեծացնել հայկական զորքը[26]։ Արղությանը զեկուցագրում ուղղակիորեն չէր շոշափում հայերին պետականություն շնորհելու խնդիրը, բայց հայկական մեծաքանակ զորք ստեղծելու մասին նրա առաջարկը, ըստ երևույթին, հետապնդում էր այդ նպատակը։

11-րդ կետում Արղությանը խոսում է Երևանի մասին, նշելով, որ տեղի հայությունը պատրիարքի հետ միասին անհամբեր սպասում է ռուսական բանակին[27]։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև զեկուցագրի վերջին մասը, որը վերաբերում է Արևմտյան Հայաստանին։ Հիշեցնելով, որ Պետրոս Մեծի պարսկական արշավանքի ժամանակ թուրքերը շտապեցին գրավել Երևանը, Գանձակը և Անդրկովկասի մեծ մասը, Արղությանը խորհուրդ է տալիս զգուշանալ թուրքական հնարավոր հարձակումից և, փաստորեն, առաջարկում է գրավել Կարսը, Բայազետը, Էրզրումը, նշելով, որ բնակչության գերակշռող մասը կազմող հայերը, ինչպես նաև քրդերը կաջակցեն ռուսներին։ Անկասկած, Արղությանը գիտեր, որ արշավանքի պլանով չէր նախատեսվում պատմական Հայաստանի այդ շրջանների գրավումը։ Այնուհանդերձ, նա ռուսական հրամանատարության ուշադրությունը հրավիրում էր նաև Արևմտյան Հայաստանի վրա, փայփայելով այն հույսը, որ արշավանքը կարող էր այնպիսի ընթացք ստանալ, որ հնարավոր կդառնար նաև այդ շրջանների ազատագրումը։

Վերոհիշյալ զեկուցագիրն ընդհանուր շատ բան ունի հայ ազատագրական շարժման գործիչներ Իսրայել Օրու, Հովսեփ Էմինի, Սարաֆյանի և Լազարյանի կողմից ռուսական կառավարությանը ներկայացրած զեկուցագրերի և ծրագրերի հետ, որոնց համեմատության վրա այստեղ հարկ չենք համարում ծանրանալ։ Նշենք միայն, որ երկու կարևոր հարցում հայ գործիչները միասնական էին։ Նախ, որ հայ ժողովուրդը պատրաստ էր զենքով ձեռք բերել իր ազատությունը և այդ պայքարում նրան անհրաժեշտ էր Ռուսաստանի հովանավորությունն ու օգնությունը։ Երկրորդ, հայ ժողովրդի ազատագրումը նրանք չէին պատկերացնում առանց նրա զգալի մասի՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման։

---

25 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 36об.

26 Նույն տեղում։

27 1796 թ. հոկտեմբերի 17-ի նամակով Ղուկաս կաթողիկոսը Դավթյանին հայտնում էր, որ Դերբենդի գրավման լուրը մեծ իրարանցում էր առաջ բերել ոչ միայն պարսիկների, այլև թուրքերի շրջանում։ Սակայն վերջիններս համոզվելով, որ ռուսական զորքերի գործողություններն ուղղված են միայն Աղա-Մուհամադի դեմ, Կարսի շրջանում կենտրոնացրած զորքերը ետ են կանչում։ Այսպես նպաստավոր գնահատելով ստեղծված իրադրությունը ռուսական բանակի առաջխաղացման համար, կաթողիկոսն իր նամակն ավարտում էր հետևյալ տողերով. «Այս դատողությունները բավական են, որպեսզի դուք գործի դնեք Ձեր բոլոր ջանքերը և միջնորդեք մեր ժողովրդի շուտափույթ փրկության համար, որն այսքան դժբախտություններ է կրում, որը սպառնում է մեզ հանկարծակի կոտորմամբ» (АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 20)։

Ռուսական բանակի համար արշավանքը սկզբից ևեթ բարեհաջող ընթացք ունեցավ, որին, անկասկած, նպաստեց բնակչության կողմից ցույց տրված նյութական և բարոյական աջակցությունը[28]։ Բացի Դերբենդի Շեյխ-Ալի խանից, ոչ մի խան չհամարձակվեց դիմադրել ռուսներին, իսկ Դերբենդի խանի դիմադրությունը վաղօրոք դատապարտված էր անհաջողության, քանի որ, նախ, կողմերի ուժերն անհավասար էին և երկրորդ, բավականին ուժեղ էր խանի քրոջ խմբավորումը, որը կողմնորոշվում էր դեպի Ռուսաստան։ Մայիսի 10-ին ռուսները գրավեցին Դերբենդը[29]։ Հայտնի է Դերբենդի հայերին ուղղված Արղությանի ուղերձը, ուր, շնորհավորելով նրանց ազատագրումը, նա հույս էր հայտնում ազատագրված տեսնել նաև ողջ հայ ժողովրդին. «Ի մէջ ամենայն ազգին հայոց դուք առաջինն էք որք տեսիք փրկութիւն... և որպէս ղդուն Դերբենդու եբաց, բացցէ և զՀայաստանս»[30]։

Երբ ռուսական բանակը մտավ Շամախի, Մուստաֆա խանը, որոշ մտավախություն ունենալով, հրաժարվեց անձամբ ներկայանալ Վ. Ա. Զուբովին։ Եվ միայն այն բանից հետո, երբ Արղությանը գնաց խանի մոտ և վստահեցրեց, որ նրան ոչինչ չի սպառնում, Մուստաֆան եկավ ռուսական բանակ։ Սակայն շուտով հայտնի դարձավ, որ Մուստաֆան մասնակից էր Իբրահիմ խանի գլխավորությամբ Զուբովի դեմ կազմակերպված դավադրությանը, և խանը փախավ լեռները։ Բարդություններից խուսափելու համար, ինչպես նաև չցանկանալով խաների հետ հարաբերությունները սրել, Զուբովը կրկին դիմեց Արղությանի միջամտությանը։ Իր հերթին, Մուստաֆան պատրաստակամություն հանդես բերեց բանակցելու Արղությանի հետ. «Շատ եմ ցանկանում հանդիպել Ձեզ հետ, որպեսզի խորհրդակցելով օգտակարն անեմ, սակայն, նման հնարավորություն չունենալով չեմ կարողանում վճռել»[31]։ Զուբովի հրահանգների համաձայն Արղությանը պետք է վստահեցներ խանին, որ հրամանատարը միտք չունի նրանից վրեժ լուծել և համոզեր վերադառնալ իր նստավայրը[32]։ Արղությանին հաջողվեց կատարել այդ առաջադրանքը։ Օգոստոսի 23-ին Սաղիան գյուղի հայկական վանքում Մուստաֆան երդվեց հավատարիմ լինել Ռուսաստանին։

Արղությանի հեղինակության մասին է վկայում նաև այն, որ Զուբովի հետ հարաբերությունները լավացնելու նպատակով շուտով նրա միջնորդությանն է դիմում նաև Շաքիի Սելիմ խանը. «Եթե Ձերդ Սրբազնությունը հանձն առնի կարգավորելու վերոհիշյալ խանի գործերը, ապա ես բարեկամաբար խնդրում եմ հոգ տանել նաև իմ մասին»[33],— գրում էր նա Արղությանին։ Այնուհետև խանը հայտնում էր, որ ոմն Մարկոս բեկի հանձնարարել է բանավոր տեղեկություններ հաղորդել Արղությանին։ Հնարավոր է, որ դրանք վերաբերում էին Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին, որի մասին Արղությանի միջոցով ռուսական հրամանատարությանը տեղյակ էին պահում խաները։

---

28 Տե՛ս Զ. Տ. Գրիգորյան. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը. Երևան, 1978, էջ 62։ Պատահական չէր, որ Սուվորովը հեգնանքով էր արտահայտվում Զուբովի «հաղթանակների» մասին, որոնց արձագանքները բավականին ուռճացած էին հասնում Պետերբուրգ։ Նրա դիպուկ բնորոշմամբ այդ ամենն ավելի շատ ներկայացման էր նման, քան թե ռազմական սխրագործության, քանի որ ռուսները, փաստորեն, լուրջ դիմադրության չհանդիպեցին (տե՛ս М. Г. Нерсисян. Указ. соч., с. 77—78)։

29 Դերբենդի գրավման ժամանակ հայերը մեծ օգնություն ցույց տվեցին ռուսներին (տե՛ս Жизнь Артемия Араратского, с. 127—128)։

30 «Բանբեր Երևանի համալսարանի», 1978, № 2, էջ 67—68։ Ռուսերեն օրինակը՝ ЦГВИА, ф. ВУА, д. 2802. Письмо архиепископа Иосифа (наместника Араратского) к дербентским армянам, 1796 г.

31 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 40об.

32 Նույն տեղում, թ. 40հշ.—42 (Наставление главнокомандующего о внушении Мустафе хану, поступок его с ним).

33 Նույն տեղում, թ. 43 հշ.—44։

Ռուսական զորքերի առաջխաղացումից առավել նախազգուշանում էր Շուշու խանը։ Վերջինս տեղյակ էր ռուսական կառավարության հետ մելիքների ունեցած հարաբերություններին։ Բնական է, որ խանի անհանգստությունն է՛լ ավելի պետք է լիներ ռուսաց բանակում Արղությանի ներկայությունից։ Իշխանությունը պահպանելու համար Իբրահիմը կանգ չէր առնում ոչնչի առաջ։ Նա դավադրություն կազմակերպեց հրամանատարի դեմ, որը, սակայն, բացահայտվեց։ Դա չխանդարեց խանին իրեն կոչել Ռուսաստանին «հավատարիմ» հպատակ և հրամանատարից զորք խնդրել «անհավատարիմ» խաներին պատժելու համար[34]։ Ղարաբաղի խանը մի սիրալիր նամակով դիմեց նաև Արղությանին. «Այստեղից վերադարձող պարոն մայոր Ավետիքի հետ ուղարկում եմ այս սրտաբուխ նամակս, իսկ մնացյալի վերաբերյալ հանձնարարել եմ նրան տեղյակ պահել Ձերդ Սրբազնությանը բանավոր։ Վերջում խնդրում եմ, որպեսզի միշտ հիշեք ինձ Ձեր հոգեպարար աղոթքներում»[35]։ Որքան էլ որ Իբրահիմին դուր չգար, նա ստիպված էր հաշվի նստել այն փաստի հետ, որ Արղությանը կարևոր անձնավորություն էր ռուսաց բանակում և վայելում էր հրամանատարի բարեհաճությունը։

Հոկտեմբերի վերջերին Վ. Ա. Զուբովը դեներալ-մայոր Ա. Մ. Ռիմսկի-Կորսակովին կարգադրեց Գանձակի վրայով շարժվել Վրաստանի ուղղությամբ։ Այդ բանակը, Վրաստանում եղած զորքերի հետ միասին, կովկասյան կորպուս անվան տակ պետք է հասներ մինչև Կուր և Արաքս գետերի հատման վայրը, որտեղից, կապ հաստատելով կասպիական կորպուսի հետ, որը գտնվում էր Զուբովի անմիջական հրամանատարության ներքո, նրանք միացյալ ուժերով պետք է գործեին Աղա-Մուհամադի դեմ։ Քանի որ Ռիմսկի-Կորսակովի բանակն անցնելու էր հիմնականում քրիստոնյաներով բնակեցված տերիտորիաներով, Զուբովը խնդրեց Արղությանին ուղեկցել Ռիմսկի-Կորսակովին[36]։ Արղությանի միսիան պարզորոշ արտահայտված է Ռիմսկի-Կորսակովին Զուբովի տված հրահանգում. «Ձերդ գերազանցության ողջախոհությանն եմ թողնում, որ Ձեր վարքագիծն այնպես կառուցեք, որպեսզի մահմեդականները ժամանակից շուտ կասկածելու և մեր հանդեպ զգուշավորության միջոցներ ձեռնարկելու պատճառներ չունենան, իսկ քրիստոնյաներն էլ չկորցնեն մեզ հետ կապված հույսերը և շդադարեն մեզ եռանդուն ծառայելուց։ Այս երկու հակասությունների հարթեցման գործում... ոչ քիչ չափով կարող է նպաստել Հայոց արքեպիսկոպոս Հովսեփի գաղտնի միջնորդությունը»[37]։

Նպատակ ունենալով հնարավորին չափ խաղաղ ճանապարհով հաստատվել Անդրկովկասում, ցարական կառավարությունն աշխատում էր պահպանել քրիստոնյա բնակչության համակրանքն ու աջակցությունը և լավ վերաբերմունքով իր կողմը գրավել նաև մահմեդականներին։ Այդ գործում նա քիչ հույսեր չէր կապում Արղությանի հետ, որն իր հերթին գիտակցելով, որ հայ ժողովրդի ազատագրումը վերջ ի վերջո կապված էր ռուսական զենքի հաղթանակների հետ, աշխատում էր վառ պահել հյուսիսային տերության նկատմամբ իր հայրենակիցների ունեցած հավատը և ամեն կերպ նպաստել ռուսական բանակի առաջխաղացմանը։ Հարկ է նշել, որ այս հանգամանքը բնորոշ է եղել Արղությանի ողջ գործունեությանը, որի միակողմանի գնահատականը կարող է սխալ եզրահանգումների առիթ տալ։

Արշավանքի ընթացքում ռուսական բանակը զգում էր պարենամթերքի ու փոխադրամիջոցների խիստ պակաս, և Ռիմսկի-Կորսակովի բանակը կկանգներ մեծ դժվարությունների առաջ, եթե նրա բանակում չգտնվեր Արղությանը։ Հրամանատարի խնդրանքով նա կարողացավ հայաբնակ շրջաններից անհրաժեշտ թվով սայլեր հայթայթել՝ այդպիսով նպաստելով ռուսական բանակի

34 Նույն տեղում, թ. 48հշ.—49հշ.։

35 Նույն տեղում, թ. 48հշ.։

36 Նույն տեղում, թ. 50հշ., Собрание актов, ч. III, с. 338—339.

37 Տե՛ս Н. Дубровин. Указ. соч., с. 182.

հետագա առաջխաղացմանը Գանձակի ուղղությամբ. «Ես մեծապես երախտապարտ եմ Ձերդ Սրբազնությանը իմ հրամանատարության տակ գտնվող զորքի համար այդքան շատ բան անելու համար և շատ եմ ցավում, որ դուք այս ցեխոտ և դժվար ճանապարհին տանջում եք Ձեզ։ Հուսով եմ, Սելիմ խանը, Ձեր նամակի համաձայն, չի մերժի թույլատրել հայերին մինչև Կուր ռազմամթերք տեղափոխել»[38],—գրում էր Ռիմսկի-Կորսակովը Արղությանին։

Դեկտեմբերին ռուսները մոտեցան Գանձակին։ Ինչպես արդեն նշել ենք, Գանձակի խանը հակված էր ընդունելու Ռուսաստանի գերիշխանությունը, սակայն հնարավոր համարելով, որ իրեն կարող են իշխանազուրկ անել, զգուշանում էր։ Արղությանը նախօրոք հարաբերությունների մեջ մտնելով խանի հետ, վստահեցրեց, որ հրամանատարը միտք չունի զրկելու նրան իշխանությունից։ Այդպես Գանձակն էլ առանց կրակոցի հանձնվեց ռուսներին։ Գանձակի գրավմանը նպաստելու համար Զուբովը հատուկ շնորհակալություն հայտնեց Արղությանին. «Ջավադ խանին հանգստացնելու համար իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Ձեզ»[39]։

Ջավադ խանը Արղությանի միջոցով տեղեկություններ հաղորդեց Զուբովին թուրքերի և Աղա-Մուհամադի միջև տարվող բանակցությունների մասին։ Նա մասնավորապես հայտնում էր, որ Ախալցխա է ժամանել թուրքական 30-հազարանոց բանակը Յուսուֆ փաշայի գլխավորությամբ, որը սուրհանդակ էր ուղարկել Աղա-Մուհամադի մոտ՝ հավաստիացնելով, որ առանց նրա համաձայնության սահմանը չի անցնի[40]։ Զգուշանալով ռուսական զորքերի առաջխաղացումից թուրքերը, փաստորեն, իրենց օգնությունն էին առաջարկում Աղա-Մուհամադին։ Ինչպես նշվել է, Արղությանը նախազգուշացնում էր հրամանատարին նման հնարավորության մասին[41]։

Այդ ժամանակաշրջանում Վրաստանը գտնվում էր ծանր դրության մեջ։ Հերակլ II-ը մտադիր էր անգամ դիմել Թուրքիայի օգնությանը[42]։ Երկար տարիներ Արղությանը նամակագրական կապ ուներ վրաց թագավորի հետ և մեծ հեղինակություն էր վայելում վերջինիս մոտ։ Հերակլը վստահում էր Արղությանին և հաճախ էր դիմում նրա միջնորդությանը ռուսական կառավարության հետ ունեցած հարաբերությունների ժամանակ։ Իմանալով Հերակլի որոշման մասին Արղությանն աշխատում է ետ պահել նրան նման քայլից։ Ուշագրավ է, որ այդ անելիս նա դիմում է այլաբանության օգնությանը, որը թելադրվում էր զգուշություն պահպանելու անհրաժեշտությունից. «Համարձակվում եմ խորհուրդ տալ Ձերդ Գերազանցությանը խորաթափանց լինել և հեռուն տեսնել, ներկայի վրա նայելով առանց հուսահատվելու՝ Ձեր ենթականերին հանգստացնելու և հաստատուն պահելու համար, որպեսզի նրանց սրտերում ունայն և վնասաբեր մտքեր չծագեն խմելու այն պղտոր ջրից, որն արդեն շատ անգամներ աննկարագրելի դժբախտությունների պատճառ է դարձել... մինչև իսկ Ձեր թագավորության կորստյանը հասցնելով»[43]։ Արղությանը խորհուրդ էր տալիս Հերակլին համբերությամբ զինվել ու չդիմել անհեռատես քայլի։ Նա Հերակլին հայտնում էր նաև, որ Վրաստանի դժվարին վիճակի մասին ինքը տեղյակ է պահել հրամանատարին, և նա խոստացել է, որ շուտով օգնություն կլինի։ Եվ իրոք, 1796 թ. դեկտեմբերին Զուբովն Արղությանին գրում է. «Վրացական թագավորության վերաբերյալ իմ կողմից մանրամասն կարգադրություն է արվել գեներալ-մայորին (Ռիմսկի-Կորսակովին—Ս. Ղ.) և նրան բավականաչափ գումար է տրամադրված բոլոր անհրաժեշտ ծախսերի համար։ Հետևապես, կարող եմ Ձերդ Սրբազնությանը հավաստիացնել, որ ամեն ինչ կկար-

38 Собрание актов..., ч. III, с. 340.
39 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 31.
40 Նույն տեղում, թ. 54հշ.։
41 Նույն տեղում, թ. 37հշ.։
42 Տե՛ս П. Г. Бутков, Указ. соч., с. 407.
43 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 47.

գավորվի»[44]։ Հարկ է նշել, որ Արղությանը ռուսական կառավարության ուշադրությունը մշտապես հրավիրում էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև դրացի վրաց ժողովրդի ծանր կացության վրա։

Ռուսական բանակի գալստյանն անհամբեր սպասում էր «արարատյան հայությունը»։ Հրամանատարին ուղղված նամակում երևանցիները գրում էին, որ Արղությանի միջոցով բազմիցս դիմել են կայսրուհուն իրենց փրկության խնդրանքով և հույս ունեն, որ Զուբովը կիրականացնի այդ առաքելությունը. «Մենք Ստեփան Դավիդովի միջոցով խնդրել ենք արքեպիսկոպոս Հովսեփին միջնորդել մեր փրկության համար ամենաօգուտաբեր կայսրուհու առջև, որը և հանձնարարել է այդ գործը Ձերդ գերազանցությանը»[45]։

Եկատերինա II-ի հրամանագրի համաձայն կովկասյան կորպուսի գործողությունների պլանի մեջ էր մտնում նաև «Հայաստանի վերականգնումը»[46]։ Միևնույն ժամանակ, Ռիմսկի-Կորսակովին Վ. Ա. Զուբովի տված հրահանգում խոսվում էր Երևանը Վրաստանին միացնելու և Ղարաբաղի մելիքներին վրաց թագավորից կախման մեջ գցելու մասին[47]։ «Ժամանակի ընթացքում Երևանի և Գանձակի մարզերի միացմամբ հզորանալով և հայ մելիքներին կախման մեջ գցելով, երկիրն այդ կարող է սպառնալից լինել հարևանների համար»[48],— նշված էր հրահանգում։ Այնուհետև կարգադրվում էր Վրաստանի սահմանների ընդարձակման վերաբերյալ պլանները պահել խիստ գաղտնի և դրանց մասին տեղյակ պահել միայն Հերակլին և իշխան Ճավճավաձեին։ Այդ տեսակետից գուցե պատահական չէր, որ Զուբովը խուսափել էր Արղությանի հետ Երևանի հարցը շոշափել[49]։

Հայտնի է, որ Երևանի խանը հարկ էր վճարում Հերակլին, պահպանելով, սակայն, իր ինքնուրույնությունը։ Չկարողանալով վերջնականապես իրեն ենթարկել Երևանը, Հերակլը աշխատում էր Ռուսաստանի օգնությամբ այն միացնել Վրաստանին։ Իր հերթին, ռուսական կառավարությունը, զգուշանալով Թուրքիայի հետ կոնֆլիկտի մեջ մտնելուց, գերադասում էր նրան սահմանակից մարզերը զորք չմտցնել՝ աշխատելով Երևանը ձեռք բերել վրաց թագավորի միջոցով։ Եվ երբ Հերակլը զորք խնդրեց Զուբովից Գանձակի վրա արշավելու համար, նրան հայտնեցին, որ Գանձակի գրավումը մտնում է Ռուսաստանի պլանների մեջ, իսկ Երևանի գրավումը թողնվում է Հերակլին[50]։

Ռուսական կառավարությանը հայտնի էր, որ ամենայն հայոց կաթողիկոսը մեծ հեղինակություն է վայելում ողջ հայության շրջանում և բարձր էր գնահատում նրա դերը հայերի ռուսական կողմնորոշման գործում։ Զուբովը մի երկարաշունչ նամակ հղեց կաթողիկոսին, ուր մասնավորապես գրում էր. «Հուսով եմ, որ չեք դադարի խրատելուց ուղղափառ ժողովրդին, որպեսզի մեր հովանավորությամբ շարունակի հանգստության և բարօրության մեջ մնալ և բոլոր միջոցներով աջակցի մեզ իր թշնամու ուժերը արմատախիլ անելու։ Եվ թող բոլորը մնան իրենց այժմյան տերերի իշխանության տակ, որը հաստատելու և ապահովելու ենք եկել և ոչ թե ոչնչացնելու»[51]։

Ոչինչ չգրելով հայ ժողովրդին օգնություն ցույց տալու վերաբերյալ, Զուբովը, փաստորեն, կաթողիկոսից պահանջում էր հնազանդության կոչել

---

44 Նույն տեղում, թ. 51։ Собрание актов. ч. III, с. 341.

45 АВПР, ф. СРА, оп. 100/III. д. 462, л. 53—53об.

46 Տե՛ս И. Ф. Дубровин. Указ. соч., с. 84.

47 Ի դեպ, 1793 թ. Պ. Ա. Զուբովին ուղղված նամակում Արղությանը հայտնում էր Ղարաբաղի մելիքների խնդրանքը՝ վրաց Դավիթ արքայազնին իրենց վրա թագավոր կարգել, հակառակ դեպքում, թույլատրել գաղթելու Կասպից ծովի շրջանները (տե՛ս АВПР, ф: СРА, оп. 100/III, д. 464, л. 174; Собранне актов, ч. II, с. 61—62.

48 И. Ф. Дубровин. Указ. соч., с. 182.

49 Տե՛ս Кавказская старина, 1872, № 2, с. 33.

50 Տե՛ս Վ. Գրիգորյան. նշվ. աշխ., էջ 174։

51 АВПР, ф. СРА, оп. 100/III, д. 462, л. 52—52об.

ժողովրդին իշխողների հանդեպ, ընդգծելով, որ արշավանքն ուղղված էր բացառապես Աղա-Մուհամադի դեմ։ Ինչպես երևում է, Զուբովը զգուշանում էր, որպեսզի հայերն ակտիվություն չցուցաբերեն և զենքի չդիմեն։ Նպատակ ունենալով հիմնական հարվածն ուղղել Աղա-Մուհամադի դեմ, նա աշխատում էր թիկունքը զերծ պահել կոնֆլիկտներից։ Բացի այդ, ինչպես արդեն նշեցինք, կարգադրված էր Թուրքիային սահմանակից շրջաններում ծայրահեղ զգուշություն ցուցաբերել։ Եվ այնուհանդերձ, ռուսական զորքերի առաջխաղացումը դրական երևույթ էր հայ ժողովրդի համար, որը հասկանալով՝ հայ գործիչները ողջունում էին այն։ Հատկանշական է, որ արշավանքի դադարից հետո Ղուկաս կաթողիկոսը գրում էր Շահամիրյանին։ «Ուստի և յոյս եղև մեզ՝ թէ մերձ ընդ մերձ հուպ լիցին առ մեզ, սակայն առ տարաբախտութեան մերոյ՝ օրհասին մահու ժամանեալ յիշեցելոյ մեծի կայսերուհւոյն, խաբանեցաւ գործն օգտակարագոյն աշխարհի. ըստ որում հարազատն նորին նորապսակ յաջորդն դարձ առնել ետ զօրացն՝ զամենայն ընդ ձեռամբ արկեալսն ևս թողլով հնոց տիրողացն աւերչաց»[52]։

Պարսկական արշավանքն անսպասելի վախճան ունեցավ։ Գահ բարձրացած Պավել I կայսրը ետ կանչեց ռուսական զորքերը։ Լսելով, որ ռուսական բանակը պատրաստվում է նահանջել, գրված շրջանների հայ բնակչությունը տագնապ ապրեց, քանի որ բացահայտ արտահայտել էր իր համակրանքը ռուսների գալստյան կապակցությամբ և օժանդակել նրանց. «Աստուած մի արասցէ, եթէ դարձ լինի զօրաց թագաւորին, մեք մնալոց լինեմք. ոչ թէ առաջին կեղեքութիւնն է լինելոց, չարաչար պատժելոց են զմեզ»[53],—գրում էին Արղությանին Դերբենդի հայերը։

Ճակատագրի քմահաճույքին մատնված հայերն իրենց միակ հույսը կապում էին Արղությանի հետ, որին և խնդրում էին միջնորդել ռուսական կառավարության առաջ, որպեսզի իրենց թույլատրեն անցնելու Ռուսաստանի սահմանը. «Ուստեքէ ոչ ունեմք մեզ տէր միայն մեր հայր սրբազանն... Լինի որ մեզ չի թողեն ի բերանոյ չար գազանաց իւրեանք գնան. թէ այնպէս լինի մեզ էլ տանեն յերկիրն իւրեանց»[54],—շարունակում էին նրանք։

Ռուսական կառավարությունը բավարարեց հայերի խնդրանքը։ Գաղթել ցանկացող հայերին դրամական և այլ կարգի օգնություն ցույց տալու համար Արղությանի դիմումներին ի պատասխան Գուդովիչը 1797 թ. մարտի 23-ին գրում էր. «Ինչ վերաբերում է նրանց, ովքեր նվիրված են եղել Նորին գերազանցության գահին և ծառայություններ մատուցել նրան, և հատկապես քրիստոնյաները, ապա Նորին գերազանցության հովանավորությունը նրանցից անբաժան կլինի և հաճելի են մինչև անգամ նրանք, ովքեր, վախենալով Ռուսաստանին նվիրվածության համար հետապնդումից, զորքերի հետ միասին դուրս կգան այնտեղից։ Այդպիսիներին հնարավոր ամեն տեսակ օգնություն ցույց կտրվի հենց որ նրանք Ռուսաստանի սահմանը մտնեն»[55]։ Նշված շրջաններից 500 հայ ընտանիք զորքերի ուղեկցությամբ անցան Ռուսաստանի սահմանը և հիմնեցին Ս. Խաչ քաղաքը, որին Պավել I-ը արտոնություններ շնորհեց։

Յուրովի ամփոփելով վերոհիշյալ իրադարձությունները, նկարագրելով ռուսական բանակի նահանջից հետո հայ ժողովրդի դրության է՛լ ավելի վատթարացումը և մելիքների պանդխտանալը, Արղությանը գրում է. «...մինչ ամե-

---

52 Դիվան հայոց պատմութեան. դիրք Ա—Բ, Թիֆլիս, 1893 էջ 30—31։

53 ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 31, վավ. 8։

54 Նույն տեղում։ Տեսնելով, որ ռուսական զորքերը նույնությամբ են թողնում խանական Ղարչակարդը, դեռևս ամիսներ առաջ Դերբենդի և Մուշկուրի հայերը խնդրել էին Արղությանին միջնորդել անցնելու Ղուբայում գտնվող ռուսական հրամանատարության ներքո՝ առաջվա նման իրենց յուզբաշիներին ու ավագներին ունենալու իրավունքով (տե՛ս Արղությանի նամակը Վ. Ա. Զուբովին՝ АВПР, ф. СРА, оп. 100/III, л. 463, л. 5)։

55 Собрание актов, ч. III, л. 341.

նայն ինչ յաջողութեամբ յառաջ ընթանայր, ի նոյեմբերի 5, վախճանեցաւ մեծ մայրն մեր... նորապսակն մեծ հրամայեց զօրացն յետ դառնալ, զի չկամեցաւ պաաերազմ ունել ընդ ումեք, մեք ընդ զօրացն դարձաք և Վիրքն մնացին ի յողորմելիութեան... Ազգն մեր որք ի Ղարաբաղ և ի Գանջայ էին սովու և ի դերութեան վերջացան և աեղիք նոցա ամայի եղեն։ Մելիք Ջիմշիդն եկն ի Ռուսս, Մելիք Ապովն երեք հարիր սամբ ի Շամքոր»[56]։

Այսպիսով, 1796 թ. Արղությանը լայն գործունեություն էր ծավալել, հույս ունենալով, որ հայ ժողովուրդը կազատագրվի պարսկական տիրապետությունից։ Նա զեկուցագրեր ներկայացրեց ռուս պետական և ռազմական գործիչներին, աշխատելով ռուսական կառավարության ուշադրության կենտրոնում պահել հայ ժողովրդի խնդիրը։ Անձամբ դանվելով ռուսական բանակում, Արղությանը նպաստեց մի շարք բերդաքաղաքների առանց դիմադրության հանձնվելուն, որը կարևոր նշանակություն ունեցավ ռուսական զորքերի առաջխաղացման համար։ Նրա դործադրած ջանքերի շնորհիվ բնակչության կողմից ռուսական բանակին ցույց արվեց բազմապիսի օգնություն։ Բայց Արղությանին այդպես էլ վիճակված չէր տեսնել այն նվիրական օրը, որի համար նա տարիներ շարունակ ջանք ու եռանդ չէր խնայել և որից հայ ժողովրդին քիչ ժամանակ էր բաժանում։

ИОСИФ АРГУТЯН ВО ВРЕМЯ ЗАКАВКАЗСКОГО ПОХОДА РУССКИХ ВОЙСК В 1796 г.

С. Г. ГУКАСЯН

Резюме

С закавказским походом русских войск 1796 г. армянский народ связывал свои надежды на освобождение от персидского господства. Известный деятель армянского освободительного движения того времени Иосиф Аргутян (1743—1801) развернул широкую деятельность, стараясь всячески быть полезным делу освобождения отечества. Пользуясь своим авторитетом среди правительственных кругов, накануне похода Аргутян представил докладные записки российским государственным и военным деятелям, в которых изложил план похода, вместе с тем стремясь держать в центре внимания русского правительства дело освобождения армянского народа. Рассчитывая на осведомленность Аргутяна в закавказских делах и на то, что он пользовался большим авторитетом среди местных правителей, правительство Екатерины II нашло целесообразным, чтобы Аргутян сопровождал ген. В. Зубова во время похода. Аргутян вошел в переговоры с ханами Шемахи, Шаки и Гянджи, чем способствовал их мирной капитуляции. Благодаря его стараниям, местным населением была оказана разносторонняя помощь русской армии, которая имела важное значение для ее дальнейшего продвижения. После прекращения похода Аргутян сыграл большую роль в организации русским правительством помощи армянам, желающим переселиться в Россию.

---

56 Դիվան Հայոց պատմության, գիրք Ա—Բ, էջ 243։